

երկրաշարժի պատմականությունը⁴⁵: Այս ուղղությունում ծավալուած քննարկումները վերջնական եզրակացություններ են չեն յանգել, իսկ սկզբնաղբերներն էլ լուծում են այս կապակցությունում⁴⁶: Ուստի պատահական չէ, որ աւանդաբար 1319 թ. թուրքերու երկրաշարժը ներկայացնելիս հետազոտողները դժուարանում են նշել աղբերակազիտական որեւէ ուղղակի վկայություն⁴⁷:

45 Հարցի շուրջ տե՛ս Թ. Յակոբեան, Գ. աշխ., էջ 328-332:
46 Յ. Մանանդեանը փորձում է այս մասին ակնարկ գտնել մի վիճակի արձանագրութեան մէջ (Յ. Մանանդեան, Քննարկում տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, «Երկեր», հտ. Գ, Երեւան, 1976, էջ 330-332), որն իրականում անթուական է, եւ որում յիշատակուող քաղաքի անունները պարտադիր չէ, որ անխորհրդէր երկրաշարժ: Տեղին կը լինի նշել, որ մնացած արձանագրութիւններում բացակայում է որեւիցէ ակնարկ քննութեան առարկայ երկրաշարժի վերաբերեալ:
47 Այսպէս՝ Մ. Չամչեանը լուսանցքում մատնանշում է իր համար հիմք ծառայած սկզբնաղբերը՝ «պատմ»: (Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, Վեներտիկ, 1786, էջ 317), այն է՝ «գանազան պատմութիւնը անծանօթ անձանց» (նոյնի, Պատմութիւն Հայոց, հտ. Ա, Վեներտիկ, 1784, էջ 19): Ոչ մի ուղղակի վկայութիւն չի նշում նաեւ Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած երկրաշարժերը յատուկ քննութեան առարկայ դարձրած Վ. Ստեփանեանը՝ բաւարարուելով ուսումնասիրողների տեսակետների անկայացմամբ եւ Սամուէլ Անեցու շարունակողներից մէկի մի հարցում (Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիրութեամբ Կ. Մաթեոսեանի, Երեւան, 2014, էջ 274), որում, սակայն, ոչ մի ցուցում չկայ Անիի մասին (Վ. Ստեփանեան, Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում եւ նրա մերձակայքում, Երեւան, 1964, էջ 62-64): Պատահական չէ, որ ի թիւս այլ քաղաքների՝ Անիում տեղի ունեցած երկրաշարժերը յատուկ քննութեան առարկայ դարձրած Մ. Հասրատեանը չի յիշատակում խնդրոյ առարկայ երկրաշարժը (M. Hasratyan, The medieval earthquakes of the Armenian Plateau and the historic towns of Ayrarat and Shirak (Dvin, Ani, Erevan), Annali di geofisica, vol. XXXVIII (1995), N. 5-6, pp. 719-722), որի պատմականութիւնը բացառելու տեսակետին են հակուած նաեւ Վ. Բարտոլդը (В. Бартольд, Персидская надпись на стене анийской мечети Мануче, СПб., 1911, с. 10) եւ Ն. Մարը (Н. Марр, Ани, книжная история го-

Այնուհանդերձ, ողջ ԺԴ դ. քաղաքային կեանքը Անիում չի ընդհատուել, ինչի վկայություններն են թողնուած վիճակի արձանագրություններն⁴⁸ ու դրամագիտական մեծաքանակ նիւթը⁴⁹: Սկզբնաղբերներում որեւիցէ կերպ արտացոլուած չլինելու հանգամանքը մղում է աւելի հաւանական համարելու այն տեսակէտը, որ անիական երկրաշարժի մասին պատկերացումները, իրական փաստի վրայ հիմնուած չլինելով, բխում են ժողովրդական աւանդազրոյցից⁵⁰:

Այսպիսով՝ հայոց պետականութեան խորհրդանիշի դերակատարութիւն ձեռք բերած Անի քաղաքը ժողովրդական ընկալումներում արտացոլուել է երկակի կերպով: Մի կողմից՝ Բագրատունեաց մայրաքաղաքի երբեմնի փառքը հայրենի հողի շրջանում առաջ է բերել անգամ անեցիներ շառաւիղ համարուելու ցանկութիւն, իսկ միւս կողմից՝ Անին մտազուգորդուել է անիծուած քաղաքի կերպարի հետ: Հայրենի հաւաքական մեղաւորութեան միջնադարեան ըմբռնումը տեղայնացուել է եւ հիմք ծառայել Անիի անկման աւանդազրոյցի ստեղծման համար: Աստուածաշնչական կաղապարի հիմքի վրայ անցնելով գրաւոր մշակման փուլ՝ այն, ի վերջոյ, տեղ է գտել հայոց կաթողիկոսներ Աբրահամ Կրետացու եւ Ղազար Ջահեցու աշխատութիւններում:

рода и раскопки на месте городища, Л.-М., 1934, с. 44, 125):
48 Դիւան հայ վիճակագրութեան, պրակ Ա, կազմեց Յ. Օրբէլի, Երեւան, 1966, էջ 10, 67:
49 A. Vardanyan, The evidence of coins on the history of Ani in the 14th-15th centuries, - Journal of Armenian Studies, 2013, N 2-3, pp. 202-237.
50 Աւելորդ չի լինի նշել, որ աւանդութիւններից մէկում երկրաշարժի փոխարէն հանդէս է գալիս «մուգ գոյնի ձիւնը» (Ա. Ղանալանեան, Գ. աշխ., էջ 406):

ՏԱԹԵԻԻ ՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԻ ՆԱԽԸՆԹԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆԵՐԿԱՅ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Արսէն Յարութիւնեան

Տաթեւի վանական համալիրի պատմութեան ուսումնասիրման համար անփոխարինելի սկզբնաղբերներ են յուշարձանախմբի որմերին, խաչքարերին ու տապանաքարերին պահպանուած վիճակները: Տարբեր ժամանակներում ու տարբեր առիթներով հետազոտողներն իրենց աշխատութիւններում վկայակոչել ու գիտական շրջանառութեան մէջ են դրել մի շարք վիճակներ, որոնցից մի քանիսը նոյնիսկ մեղ չեն հասել: Վիճակն արձանագրութիւնների գիտական հրատարակութիւններն ամփոփուած են «Դիւան հայ վիճակագրութեան» ակադեմիական մատենաշարում՝ դասակարգուած սկզբնապէս ըստ Հայաստանի շրջանների, ներկայումս՝ ըստ մարզերի: Միջազգային Corpus անունով առաւել յայտնի հատորաշարում վիճակները հրատարակուած են համաձայն ակադեմիկոսներ Ն. Մառի եւ Յ. Օրբէլու՝ Անիի վիճակները տպագրութեան պատրաստելու առիթով մշակած սկզբունքների (վիճակներին կից գրչանկար, լուսանկար, վերծանութիւնները համապատասխան պայմանական նշաններով եւ այլն)¹: Դրանք էապէս տարբերուած են վիճակների նախ-

ընթաց հրատարակութիւններից, որոնք տեղ են գտել պատմագրական մի քանի երկերում² եւ ուսումնասիրութիւններում: Վերջիններս հիմնականում ԺԹ. դարի տեղագրական բնոյթի աշխատութիւններ են՝ ստեղծուած մեծ մասամբ հոգեւորականների կողմից, ովքեր, շրջագայելով Հայաստան աշխարհի ու նրա սահմաններից դուրս գտնուող մի շարք բնակավայրերում, թղթին են յանձնել իրենց տպաւորութիւնները՝ յուշարձանների նկարագրութիւններին զուգահեռ վկայակոչելով նաեւ վիճակներ³: Այսօրինակ աշխատու-

1 «Դիւան հայ վիճակագրութեան» Ա. պրակի սկզբում գետնորում են ակադ. Յ. Օրբէլու՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանում 1914 թ. կարդացած «Երկրակի վիճակագրութիւնները» դասընթացը ներկայացնող «Հայկական վիճակն արձանագրութիւնների գիտական նշանակութիւնը» գեկուցը եւ վիճակագրու Ս. Բարխուդարեանի «Հայկական վիճակագրութիւն» խորագրով առաջաբանը, որոնցում, ըստ հարկի, արժեւորուել են վիճակների կարեւորութիւնն ու դրանց գիտական հրատարակութիւնների անհրաժեշտութիւնը (Դիւան հայ վիճակագրութեան, պրակ I, կազմեց՝ Յ. Ա. Օրբէլի, Երեւան, 1966, էջ V-XXX):

2 Հայերէն վիճակներն իբրեւ աղբերակապատկան հաւաստի վաւերագրեր կարեւորել ու առաջին անգամ իր պատմութեան մէջ օգտագործել է Սիւնեաց մետրոպոլիտ Ստեփանոս արք. Օրբէլեանը (Պատմութիւն Բանակից Սիւնեաց, Թիֆլիս, 1910), ԺԷ. դարում Յովհաննաս վանքի միաբան Ջաքարիա Սարկաւազ Բանաքեղցին, հաւաքելով տեղի վիճակները, դրանք ներկայացրել է իբրեւ իր պատմագրութեան առանձին գլուխ, որով եւ կազմել է վանքի «Կոնդակը» (Ջաքարիա Բանաքեղցի, Պատմութիւն: Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից, աշխ. Ա. Վիրաբեանի, Երեւան, 2015): Այս շարքում անուրանալի վաստակ ունի նաեւ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալեանը, ում՝ Խաչէնի տարածաշրջանի եւ շրջակայքի վիճակները ամբողջացնող տեղորի վաղագոյն ընթացակարգութիւնը (գրուած Գանձասարում՝ 1809 թ., Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալեանի ձեռքով) վերջերս մեր կողմից դրուեց գիտական շրջանառութեան մէջ (Ա. Յարութիւնեան, Եսայի Հասան-Ջալալեանի վիճակագրական վաստակը (ըստ ՄՄ թիւ 7821 ձեռագրի), - «Լեւոնտիս», 2015, Ժ, էջ 117-159):
3 ԺԹ. դարում լայն տարածում է ստացել տեղագրական բնոյթի աշխատութիւնների հրատարակութիւնը. դրանց թիւն այնքան մեծ է, որ կը բաւարարուեն միայն մի քանիսը նշելով՝ Մինաս Բժշկեան, Ժամանակագրութիւն ի Լեհաստան

թիւները, սակայն, հեռու էին վիմագրերի ամբողջական ու պատշաճ նկարագրերը տալու գաղափարից, ուստի հայ վիմագրութեան Corpus ունենալու անհրաժեշտութիւնն առաջնային էր դարձել:

Այսօր հայագէտների սեղանին է դրուած «Դիւան հայ վիմագրութեան» մատենաշարի թուով ինը պրակ⁴: Մեր գեկուց-

ե յայլ կողման բնակեալս ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վեներիկ, 1830. Յովհաննէս եպս. Ծախաթումեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխ. Ա. Տէր-Ստեփանեանի, Ս. Էջմիածին, 2014 (վերահրատարակութիւն). Սարգիս վրդ. Ջալալեանց, Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա., Տիփլիս, 1846, մասն Բ, Տիփլիս, 1858. Լ. Ներսէս Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վեներիկ, 1864. Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երեւան, 1999 (վերահրատարակութիւն). Լ. Ղեւոնդ Ալիշան, Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց, Վեներիկ, 1881. Առնի Սիսուան. համագրութիւն հայկական Կիլիկիոյ, Վեներիկ, 1885. Առնի Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վեներիկ, 1890. Առնի Սիսուան. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վեներիկ, 1893. Մեսրոպ արք. Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, որ այժմ Նորբայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895. Առնի Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, Տիփլիս, 1904:

4 Դիւան հայ վիմագրութեան, պրակ I, Անի քաղաք, կազմեց՝ Լ. Ա. Օրբէլի, Երեւան, 1966:
 Դիւան հայ վիմագրութեան, պրակ II, Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի շրջաններ, կազմեց՝ Ս. Գ. Բարխուտարեան, Երեւան, 1960:
 Դիւան հայ վիմագրութեան, պրակ III, Վայոց ձոր. Եղեգնաձորի եւ Ազիզբեկովի շրջաններ, կազմեց՝ Ս. Գ. Բարխուտարեան, Երեւան, 1967:
 Դիւան հայ վիմագրութեան, պրակ IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու եւ Վարդենիսի շրջաններ, կազմեց՝ Ս. Գ. Բարխուտարեան, Երեւան, 1973:
 Դիւան հայ վիմագրութեան, պրակ V, Արցախ, կազմեց՝ Ս. Գ. Բարխուտարեան, Երեւան, 1982:
 Դիւան հայ վիմագրութեան, պրակ VI, Իջեւանի շրջան, կազմեցին՝ Ս. Ա. Աւագեան, Լո. Մ. Զանփուղեան, Երեւան, 1977:
 Դիւան հայ վիմագրութեան, պրակ VII, Ուկրաինա, Մոլդովա, աշխ. Գր. Մ. Գրիգորեանի, Երեւան, 1996:

ման ատաղճը կազմող Տաթեւի Հոյակերտ վանքի վիմագրական ժառանգութիւնն ամփոփուած է հատորաշարի երկրորդ մասում՝ վիմագրութեան խորագրիտակ Սեղրակ Բարխուտարեանի աշխատասիրութեամբ: Պրակը, թէեւ երկրորդ համարն է կրում, հրատարակուել է առաջին հատորից առաջ, քանի որ Անիի վիմագրերն ամփոփող հատորն ի պատիւ կազմող Յովսէփ Օրբէլու, նախատեսուած էր լինել առաջինը: Տաթեւի վիմագրերի հրատարակումից անցել է աւելի քան կէս դար, ուստի այս ընթացքում իրականացուած հնագիտական պեղումների եւ շինարարական տարաբնոյթ աշխատանքների արդիւնքում ի յայտ եկած կամ հրատարակիչների ուշադրութիւնից վրիպած արձանագրութիւնները կարիք ունեն ամբողջացման ու նորովի ուսումնասիրման. էլ չասենք, որ սրբագրումների անհրաժեշտութիւն կայ նաեւ հրատարակուած վիմագրերում:

Սեղրակ Բարխուտարեանը «Դիւան հայ վիմագրութեան» մատենաշարի երկրորդ պրակում, որն ընդգրկում է Գորիսի, Սիսիանի եւ Կապանի վիմագրերը, Տաթեւ գիւղից եւ Համանուն վանքից ներկայացրել է 93 արձանագրութիւն, որոնցից 26-ը տեղում չի տեսել եւ վերցրել է նախորդ հրատարակիչներից: Ընդհանուր առմամբ բուն Տաթեւի վանքից Ս. Բարխուտարեանը վկայակոչել է 86 վիմագիր (23-ը՝ ըստ նախորդ հրատարակիչների), որոնցից 31-ը վանքի գլխավոր Ս. Պողոս-Պետրոս եկեղեցուց, 22-ը՝ գաւիթ-սրահից, 11-ը՝ Ս. Գրի-

Դիւան հայ վիմագրութեան, պրակ VIII, Ռուսաստանի Դաշնութիւն, աշխ. Գր. Մ. Գրիգորեանի, Երեւան, 1999:
 Դիւան հայ վիմագրութեան, պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին՝ Ս. Գ. Բարխուտարեան, Կ. Գ. Ղաֆադարեան, Ս. Տ. Սաղումեան, Երեւան, 2012:
 Դիւան հայ վիմագրութեան, պրակ X, Շիրակի մարզ, կազմեց՝ Ս. Գ. Բարխուտարեան (պատրաստում է տպագրութեան):

գոր Լուսաւորիչ եկեղեցուց, 2 արձանագրութիւն՝ Ս. Աստուածածին եկեղեցուց եւ 16-ը՝ բակի խաչքարերից ու տապանաքարերից: Արձանագրութիւնների ընդհանուր կազմում են նաեւ պղնձէ զանգերի մակագրութիւնները⁵, եւս 3-ը՝ խաչ-մասունքարաններից: Պրակում տրուած է նաեւ գիւղի Ս. Մինաս եռանաւ բազիլիկ եկեղեցու շինարարութեան 1646 թուակիր եւ աղբիւրի՝ 1745 թ. արձանագրութիւնները, վանքից հարաւ գտնուող Տոււմբալանց Ս. Աստուածածին եկեղեցու խաչքարի ընդարձակ վիմագիրը եւ եւս մէկը՝ Տաթեւի Մեծ անապատից:

Վիմագրերից շատերը, որոնք տեղում ստուգել է կազմողը, ուղեկցուած են գիտական հրատարակութիւններին յատուկ բաղադրիչներով: Իւրաքանչիւր վիմագրից յետոյ նշուած են նախորդ հրատարակութիւնները, մասնաւորապէս՝ Սիւնեաց մետրոպոլիտ Ստեփանոս արք. Օրբէլեանն իր Պատմութեան մէջ առաջին անգամ Տաթեւից յիշատակել է ընդամէնը 2 վիմագիր⁶: Առաւել մեծաքանակ հրատարակութիւնները տեղագրական աշխատութիւններում են. Սարգիս վրդ. Ջալալեանցը Տաթեւից վկայակոչել է 14 արձանագրութիւն⁷, Յովհաննէս եպս. Շահխաթունեանցը՝ 18, Լ. Ղեւոնդ-

5 Տաթեւի վանքի զանգերին ու դրանց արձանագրութիւններին անդրադարձել է հնագէտ Արամ Բալանթարեանը (Ա. Ա. Բալանթարեան, Տաթեւի վանքի զանգերը եւ նրանց արձանագրութիւնները, Հայագիտական հետազոտութիւններ, պրակ Ա., Երեւան, 1974, էջ 115-119):
 6 Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն Գաղափարի Սիսուան, էջ 224, 416-418: Ս. Բարխուտարեանը «Դիւանում» Օրբէլեանի անունը նշում է նաեւ թիւ 36 վիմագրի դէպքում, մինչդէռ նրանում վկայուած Գրիգոր րաբունապետ Տաթեւացու քրոջ որդի Առաքել եպիսկոպոսի մասին պատմագիրը միայն խօսում է՝ առանց վիմագիր վկայակոչելու (էջ 525):
 7 Սարգիս վրդ. Ջալալեանց, Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ., էջ 284-285, 301-303:
 8 Յովհ. եպս. Ծախաթումեանց, Ստորագրութիւն..., էջ 449-450:

Ալիշանը՝ 29⁹, Մ. Փափագեանցը՝ 12¹⁰, Ե. Լալայեանը՝ 25¹¹, Կ. Կոստանեանցը՝ 17¹² եւ 5-ը՝ Ա. Երիցովը¹³: Նշուածներին Ս. Բարխուտարեանն աւելացրել է եւս 46 վիմագիր: Պէտք է արձանագրենք, որ պրակում օգտագործուած չէ Ս. Էջմիածնի միաբան Մեսրոպ Մագիստրոս Տէր-Մովսիսեանի գիրքը, որտեղ Տաթեւից ներկայացուած է 146 վիմագիր¹⁴: Դրանցից 45-ը, որ Մեսրոպ Մագիստրոսը հրատարակել է դեռեւս 1918 թ.¹⁵, վերջերս վերահրատարակուել են առանձին ժողովածոյում¹⁶: Այս հանգամանքը թոյլ է տուել Ս. Բարխուտարեանին Մեսրոպ Մագիստրոսի կողմից հրատարակուած մի շարք վիմագրեր (թէեւ ոչ «Դիւանի» սկզբունքներին համապատասխան) ներկայացնել իբրեւ նորայայտ, ինչպէս օ-

9 Լ. Ղեւոնդ Ալիշան, Սիսուան, էջ 227-238, Հայագիտութիւն, Վեներիկ, 1901, էջ 270, 338 (ծմբ. 4), 484 (ծմբ. 1):
 10 Հնութիւնք վանօրէից Սիւնեաց աշխարհի, կազմեց Մ. Փափագեանց, գիրք հինգերորդ, Վաղարշապատ, 1892:
 11 Ե. Լալայեան, Սիսիւան. միջեր պապայ ուսումնասիրութեան համար, Վաղարշապատի հանդէս, գիրք Գ., 1898, թիւ 1, էջ 129-130, 135, 140-143, 145:
 12 Վիմակն տարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետրոսոպ, 1913, էջ 4, 15, 23, 24, 116-117, 128, 132, 135, 137, 153, 154, 168, 183, 184, 187, 188, 217 (Ս. Բարխուտարեանը «Դիւանում» Կ. Կոստանեանցին յղում է միայն նշուածներից չորսի դէպքում, որ են՝ էջ 4, 15, 116-117, 168):
 13 А. Д. Ерицов, Татевский Монастырь, Пятый Археологический съезд в Тифлисе, Москва, 1882, с. 417-418.
 14 Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները, գրեց Մեսրոպ Մագիստրոս արք. Տէր-Մովսիսեան, Երուսաղէմ, 1938, էջ 44-53:
 15 Արձանագրութիւններ Տաթեւի վանքի եւ շրջակայքի (ստորագրում՝ Մեսրոպ եպիսկոպոս), Վաղարշապատ, 1918, ապրիլ-դեկտեմբեր, էջ 204-225:
 16 Մեսրոպ արք. Տէր-Մովսիսեան (Մեսրոպ Մագիստրոս), Յօդուածների ժողովածոյ, հրատարակութեան պատրաստեցին՝ Գեորգ Տէր-Վարդանեանը եւ Սուսաննա Նահապետեանը, Ս. Էջմիածին, 2010, էջ 279-297:

րինակ՝ արձ. 2 (15), 10 (19), 19 (20), 20 (71), 44 (65), 51 (112), 52 (98), 53 (7), 54 (105), 55 (107), 59 (102)¹⁷ եւ այլն:

Յետագայում Միւնիքի մարզի անտիպ արձանագրութիւնների շարքում վիմագրագէտ Սուրէն Սաղումեանը Տաթեւի վանքից եւս 23 վիմագիր է հրատարակել եւ որոշ ճշգրտումներ արել նախորդ հրատարակութիւններում՝ փաստելով, որ «այսքանով չի վերջանում Տաթեւի վիմագրերի մասին ասելիքը. դեռեւս 3-4 տասնեակ անտիպ վաւերագրեր կան վանքի հողմահար ու գոսացած պատերին, որոնց հրապարակումը նպաստ կը բերի այս բեղմնավոր կենտրոնի եւ Համագրային պատմութեանը»¹⁸: Ս. Սաղումեանը եւս, թերեւս անտեղեակ Մեսրոպ Մագիստրոսի հրատարակած արձանագրութիւններից, արդէն գիտական շրջանառութեան մէջ դրուած որոշ վիմագրեր ներկայացնում է իբրեւ նորայայտ:

Անդրադարձը Տաթեւի վանքի վիմագրութեան նախկին հրատարակութիւններին եւ ներկայիս անելիքներին պայմանաւորուած է վերջին երկու տարիներին մեր կողմից գրառուած մի շարք նոր վիմագրերի առկայութեամբ ու տպագրուածներում արուած սրբագրութիւններով: Ակնյայտ է, որ Համալիրի վիմագրերը ցայսօր ամբողջացուած եւ ըստ հարկի ուսումնասիրուած չեն, ուստի դրանց հաւաքումն ու հրատարակումը Համարում ենք հրատապ. բաց երկնքի տակ վիմագրերը ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով վնասուում, անընթեռնելի են դառնում ու կորստեան մատնուում:

Մեր միջամտութիւնը Հիմնաւոր դարձնելու Համար յաւելինք որոշ տեղեկութիւններ վերջերս արուած ընդօրինա-

17 Փակագծերում Աշուած է Մեսրոպ Մագիստրոսի գրքում տուեալ վիմագրի հերթական համարը:
18 Ս. Սաղումեան, Նորայայտ վիմագրեր, 1 ՀՀԳ, 2001, թիւ 1, էջ 100:

կութիւնների վերաբերեալ եւ վկայակոչենք դրանցից մի քանիսը.


2015 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, մասնակցելով Տաթեւի վանական Համալիրի Հնագիտական պեղումներին¹⁹, պատեհ առիթն օգտագործելով, կարողացանք ընդօրինակել «Դիւանից» դուրս մնացած 102 մեծ ու փոքր արձանագրութիւն²⁰, որոնցից 24-ը հրատարակուած գտանք Մեսրոպ Մագիստրոսի, իսկ 13-ը Ս. Սաղումեանի աշխատութիւններում, ընդհանուր հաշուով՝ 37: Այսքանով Հանդերձ՝ 65 արձանագրութիւն անտիպ է մնում (գոնէ մեզ չեն հանդիպել այլ հրատարակութիւններ): Չնայած այն հանգամանքին, որ դրանց մեծ մասը մանր յիշատակագրութիւններ են (որոշներն էլ՝ մասամբ եղծուած), այդուհանդերձ վիմագրերը պէտք է մէկտեղուեն ու հրատարակուեն «դիւանեան» սկզբունքներին Համապատասխան՝ ունենալով նաեւ անհրաժեշտ ծանօթագրութիւններ (այդ թւում նաեւ՝ Մեսրոպ Մագիստրոսի եւ Սուրէն Սաղումեանի հրատարակած վիմագրերը, քանի որ զուրկ են գրչանկար-լուսանկարներից): Սոյն հաղորդման ծաւալային սահմանափակումները նկատի առնելով՝ տառային հերթական Համարակալմամբ վկայակոչենք նախ անտիպ, ապա ճշգրտուած արձանագրութիւններից մի քանիսը՝ գիտական հրատարակութիւններին յարիւր բազմադրիչներով:

19 Վերջին տարիներին «Տաթեւի վերածնունդ» ծրագրի շրջանակներում վանքում տարում են պեղման ու բարեկարգման աշխատանքներ: Պեղումներն իրականացնում է ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի արշաւախումբը. ղեկավար՝ պ.գ.թ. Հ. Մելքոնեան, անդամներ՝ պ.գ.թ. Ա. Յարութիւնեան, Դ. Դարսեան:
20 Եւս 17 վիմագիր ընդօրինակել ենք գիտի Ս. Միգաս եկեղեցուց եւ շրջակայ գերեզմանոցի տապանաքարերից. դրանց կ'անդրադառնանք այլ առիթով:

Ա. ԿՈԹՈՂԻ ԿԱՄ ՈՐՄՆԱՍԵԱՆ ՊԱՏՈՒԱՆԴԱՆ (բարձ.՝ 0,67 մ, լայն.՝ ճակատային մասում՝ 0,38 մ, կողքից՝ 0,24 մ)՝ ներկայումս Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու հարաւային կողմում, տնտեսական նշանակութեան չէնքի դիմաց, առջեւի եւ ձախակողմեան նիստերին, Համապատասխանաբար՝ 4 եւ 5 տողից.



ԿԱՄ ԱՆԵՑԱԿ ՄՈՒՐԻ ՊԱՏՆԱԴԻՈ Ն Ի ԶԵՆՆ ԳԻՈՐ ԴԳՆԱԶԱՐԱՐՈՂՄԵՏԻՆ:




ՅԻԸԵԱ ՔՍ ԱՅ ԶԳԻ ՈՐԳ ՆՈՒ ԱՍՏ ԿՐԱ ԴԻԱԴԻՈՐ

Վիմագիրը թուական չունի, սակայն, ըստ հնագրական առանձնայատկութիւնների՝ Տաթեւի վաղագոյն արձանագրութիւնների ժամանակակիցն է, այսինքն՝ աներկբայօրէն կարող ենք թուագրել Թ-Ժ. դդ.: Վիմագրում վկայուած Գիորգ «Հազարապետը» կամ «նուստ կրանաւորը» Ս. Պանդալէոն (վիմագրում՝ Պանտաղիոն) բժշկի անունով կոթող է կանգնեցրել: Քննութիւնը պարզում է, որ այս Համա-

քրիստոնէական սրբի պաշտամունքը տարածուել է յատկապէս Արցախ աշխարհում պայմանաւորուած Ս. Գրիգորիսի կողմից նրա մասունքներից այստեղ տեղափոխելու ու ամփոփելու իրողութեամբ: Այստեղից շատ հեռու էլք նաեւ Միւնեաց գեղատեսիլ Տաթեւի վանքը, որտեղ եւս, ըստ ամենայնի, ամփոփուել են սրբի մասունքներից: Սրա առթիւ արձանագիր կոթող կամ սիւն է կանգնեցուել: Պանդալէոնի պաշտամունքը հիմնականում կապուած է բժշկութեան, անդաւակութեան ու չբերութեան կանխման հետ: Այս արձանագրութեան վերաբերեալ ամբողջական յօդուած է պատրաստուում հրատարակութեան Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԼԷ. (37) հատորում, ուստի այստեղ կը բաւարարուենք այսքանով:

Բ. ԽԱԶԱՐ (0,71 x 0,50 մ)՝ ագուցուած Ս. Պողոս-Պետրոս եկեղեցուց դէպի հիւսիս գտնուող կիսաւէր շինութեան արեւելահայեաց որմին, ստորին մասում, 1 տող.



ԹՎԻՆ: ՈՆԵՐ: (1195), ՅԻԸԵԱՅ:


Գ. ՅԻԸԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու արտաքուստ արեւելեան որմին, խաչաքանդակի վերնամասում, 2 տող.



ԵՄԻՐՉԵՍ՝ Ի ԵՐԿՐԵՆ ՂԱՐԱԴԱՂՈՒ, Ի
ԳԵՂՁԵՆ
ԿԻՆԱՆԵ, ՃԱՂԱՍԹՅՈՒՆ ՄԲ ՏԼԱՅԼԱՂԻՍ:

Եմիրզան, ով ծագումով Ղարադաղի
Վինա գիւղից է եւ վանքի սպասաւորնե-
րից կամ այցելու-նուիրատուներից, իրեն
Աստծոյ տան ծառայ է բնորոշում: Վինա
(Վենա, Վինէ) գիւղը գտնուում է Պարսկա-
հայաստանի Ղարադաղ գաւառի Մնջուան
գաւառակում (ներկայիս Իրանի տարած-
քում), որի բնակիչների մի մասը 1940-ա-
կան թթ. ներգաղթել է Խորհրդային Հա-
յաստան²¹: Հր. Աճառեանը յիշատակում է
Ամիրզադէ արական անունից ծագած Էմիր-
զա անուանաձեւը, որը գործածական է ե-
ղել յատկապէս ժէ. եւ յետագայ դարե-
րում²²: Չնայած այս հանգամանքին, կար-
ծում ենք՝ վիճաբարը հարագատ է ժէ. դա-
րին, քանի որ յուշարձանախմբի որմերի
տարբեր հատուածներում կարելի է նկա-
տել այսօրինակ յիշատակագրութիւններ՝
թուագրուած նշուած դարաշրջանով:

Դ. ՅԻԾԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Ս. Գրի-
գոր Լուսաւորիչ եկեղեցու արտաքուստ
հարաւային որմին, խաչաքանդակների
մէջ, 2 տող.




ՍՏԵԹՂԱ
ՈՍ ԱԲԵԽԻՂԱՅ, ՍԼԱՅՐԻՉԻՍ:

Առաջին տողը հիմնականում եղ-
ծուած է, սակայն, դատելով երրորդ խաչա-
քանդակի վերեւում երկու կողմից պահ-
պանուած ԱՆ գրերից եւ յաջորդ տողի
սկզբնամասի ՈՍ տառերի առկայութիւնը

21 Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Հ.
Խ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից
շրջանների տեղանունների բառարան, հտ. 4, Ե-
րեւան, 1998, էջ 805:
22 Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառա-
րան, հտ. Բ., Երեւան, 1944, էջ 232:

հաշուի առնելով՝ կարգում ենք ՍՏԵԹԱ-
ՆՈՍ, առաւել եւս, որ խաչաքանդակների
միջնամասերում առկայ եղծուած գրերի
քանակը լիովին համապատասխանում է
այսկերպ վերծանմանը: Տարակուսելի է
մնում երկրորդ տողի վերջնամասը, որը,
չնայած Մ տառի անսովոր գրեկաձեւին՝
պայմանականորէն կարգում ենք ՄԱՅՐ
ՋԻՍ:


Ե. ԽԱՉԱՐ (0,55 x 0,47 մ)՝ երկա-
տուած, վանքի արեւելեան կողմի քարա-
կոյտի մօտ, հիմնախորանի վերին երկու
անկիւններում, ելնդագիր, 1 տող.



ԽԱՐԻՊԵԿ:

Խարիպէկ անունը, թերեւս Ղարիպէկ
անձնանունն տառադարձուած տարբե-
րակն է: Հնարաւոր է, որ Խարիպէկը խաչ-
քարագործն է: Խաչքարի միւս կէտը եւս
պահպանուել է (ընդհանուր չափը՝ 1,05 x
0,55 մ): Հիմնախաչի ուղղահայեաց թեւի
ձախ կողմում անկապակից փորագիր տա-
ռեր են նկատուում (ԱՆ...): Քանդակային
յարգարանքից դատելով՝ խաչքարը հարա-
գատ է ժե-ժԶ դդ.:

Զ. ԿՐԿՆԱԽԱՉ ԽԱՉԱՐ (0,63 x 0,47
մ)՝ ագուցուած Ս. Պողոս-Պետրոս եկեղե-
ցուց դէպի հիւսիս գտնուող կիսաւէր շի-
նութեան արեւմտահայեաց որմին, քիւին՝
1 տող, առաջին խաչի ձախ կողմում՝ 5
տող, մասամբ եղծուած.



ԹՎԻՆ] :ՈԼԹ: (1590) ԱՅ...
ՅԻՇԱՏ
ԱԿԵ
ՄԲ
ԽԱՉՍ
ԿԱ
ԻԻՉԱՂԱԽԻՆ:

Յաւօք, ինչպէս քիւի, այնպէս էլ ա-
ռաջին խաչի ձախակողմեան վիճաբարը
մասնակի եղծուած են, ըստ այդմ որոշ հա-
տուածներ անընթեռնելի եւ պայմանական
են մնում:

Է. ԽԱՉԱՐ (մօտ 0,45 x 0,45 մ)՝ ա-
գուցուած սեղանատան հիւսիսային որմին,
խաչի շուրջ՝ 3 տող.



ՍԻԿԱՍՈՆ:


Տառաձեւերի հնագրական առանձնա-
յատկութիւններից դատելով՝ խաչքարը
հարագատ է միջնադարի ուշ շրջափուլին,
թերեւս՝ ժէ-ժԸ դդ.:

Ը. ՏԱՊԱՆԱՔԱՐ. սուրանկիւն օրօրո-
ցածեւ (1,70 x 0,70 x 0,34 մ), զանգակա-
տան հարաւային կողմում, գիրը՝ թեք նիս-
տերին՝ միատող, լայն նիստերին՝ պատկե-
րաքանդակներից աջ՝ 3 եւ 2 տող, նեղ նիս-
տին՝ թուագիրը, 2 տող:



ԱՅՍ Ե ՏԱՊԱՆ] ...ԵՐԿԵՅԵ ՏԵՐ
ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՐԴԻ
ԽԱԼԻՓԱՅ ՍԻԿԱՍՈՆԻ, ՈՐ Ե ԾԱՈՒԹՅ

ԻՄԲ] ՏԱՃԱՐԻՍ:
ԱՇԱՅԿԵՐՈՏ] ՄԱՐ
ԿՈՍ ՎԱՐԱՅՊԵ
ՏԻՆ:
ՈԿ ԳԱՐՂԱ ՈՂՈՐՄԻ Ա
ՍԵ. ԱՄԵՆ:
ԹՎԻՆ ՌԾՅԵ. (1726):



Այս տապանաքարը տեղացիների
վկայութեամբ ի յայտ է եկել 1980-ական
թթ., նոր զանգակատան աւերակներից:
Քարի երկու լայն նիստերին՝ ուղղանկիւ-
նաձեւ հարթութեան վրայ, առկայ են
պատկերաքանդակներ: Մի կողմում վայել-
քի կամ խրախճանքի տեսարանն է. պատ-
կերուած է ննջեցեալը՝ ձեռքին եւ աջ կող-
մում գինու սափոր, որոնց կենտրոնում
խորովածը շշի վրայ, իսկ վերեւում՝ երեք
թաս: Միւս կողմում հեծեալի պատկերա-
քանդակն է, միայն թէ մարդը կանգնած է
եւ ձեռքով բռնել է ձիու սանձը: Այս քան-
դակից դուրս պատկերուած է մէկ այլ, քիչ
աւելի փոքրաչափ ձի:

Տապանաքարի վերնամասի կտո-
րուածքի հետեւանքով վերծանութեան մէջ
մէկ բառ կասկածելի է մնում. կարելի է
կարդալ ԳԵՐՈՒԵՑ, այսինքն՝ գերուած:
Յստակ է, որ ննջեցեալը Մարկոս վարդա-
պետի աշակերտ, ժԸ դարում առաւել տա-

